ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

«05» դեկտեմբերի 2011թ
թիվ ..212...

Հեռ. 0231 6-47-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 16 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 5 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

11679-11
07 12 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«30» նոյեմբերի 2011թ.* *թիվ 1*

## ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.***

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 16 հերթական նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| *Խ.Մկրտումյան* | ------------/ստ./ | ----------------/ստ./ | ------------------ |
| *Ս. Զաքեոսյան* | ------------/ստ./ | ----------------/ստ./ | ------------------ |
| *Ն. Գրիգորյան* | ------------/ստ./ | ----------------/ստ./ | ------------------ |
| *Գ. Գևորգյան* | ------------/ստ./ | ----------------/ստ./ | ------------------ |
| *Ա. Բախտավորյան* | ------------/ստ./ | ----------------/ստ./ | ------------------ |
| *Գ. Իսպիրյան* | ------------/ստ./ | ----------------/ստ./ | ------------------ |

*Համայնքի ղեկավար* *Է. Հովհաննիսյան*
*գ. Մուսալեռ*
*2011թվական, նոյեմբերի 30*

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ

# ՕՐԱԿԱՐԳ

*Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2011թ. Նոյեմբերի 30-ի N 1 նիստի*

1. ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

«30» նոյեմբերի 2011թ. Թիվ 2-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեն՝
   եկամտային մասով 41512.3 հազար (քառասունմեկ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար երեք հարյուր) դրամ,
   ծախսային մասով 41512.3 հազար (քառասունմեկ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար երեք հարյուր) դրամ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի եկամուտները՝ համաձայն հավելված 1-ի:
3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ համաձայն հավելված 2-ի:
4. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:
5. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2012թվականի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը) համաձայն հավելված 4-ի:
6. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունները կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 5-ի:
7. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական 2012 թվականի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 6-ի:
8. Հաստատել բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի նախահաշիվները՝ համաձայն հավելված N2-ի:
9. 2012 թվականի ըստ եռամսյակների չծախսված գումարները թույլատրել օգտագործել ըստ հաջորդականության:

10. Համաձայնություն տալ Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:
11. Համաձայնություն տալ Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ղեկավարի կողմից գործառական և տնտեսագիտական դասակարգման մեջ վերաբաշխումներ կատարելուն:
12. Մուսալեռի գյուղական համայնքի 2012 թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար սահմանել 50% չափաքանակ:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ.Մկրտումյան | /ստ./ | /ստ./ | |
| Մ. Զաքևոսյան | /ստ./ | /ստ./ | |
| Ն. Գրիգորյան | /ստ./ | /ստ./ | |
| Գ. Գևորգյան | /ստ./ | /ստ./ | |
| Ա. Բախտավորյան | /ստ./ | /ստ./ | |
| Գ. Իսպիրյան | /ստ./ | /ստ./ | |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

գ. Մուսալեռ

2011թվական, նոյեմբերի 30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«30» նոյեմբերի 2011Թ.* *ԹԻՎ 3*

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *Զիջել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի բնակիչ Խաչիկ Աբգարի Մկրտումյանին պատկանող ավտոմեքենայի գույքահարկի գումարից՝ 70 000 դրամ:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ*

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| *Ս. Զաքևոսյան* | /ստ./ | /ստ./ | |
| *Ն. Գրիգորյան* | /ստ./ | /ստ./ | |
| *Գ. Գևորգյան* | /ստ./ | /ստ./ | |
| *Ա. Բախտավորյան* | /ստ./ | /ստ./ | |
| *Գ. Իսպիրյան* | /ստ./ | /ստ./ | |

*Համայնքի ղեկավար* *Է. Հովհաննիսյան*
*գ. Մուսալեռ*
*2011թվական, նոյեմբերի 30*